Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2581

գումկուսի (բ) Կենտկոմի յեվ Բագվի
Կոմիտեյի Կուլտպրոպ

ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

ՅԵՎ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆՅՈՒԹԵՐ ԳՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՅԿՈՂ
Կ-40

AZGRNOSH

Բագու — 1931

2010

Ադրկոմկուսի (Բ) Կենտկոմի յեվ Բագվի
Կոմիտեյի Կուլտպրոպ

ЗКПЗ
Ч-40

ՎԵԿԱՊԵ-Ի (Բ)
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ
— ՅԵՎ —
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆՅՈՒԹԵՐ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

№ 2001

ԱՊՀ
Բագու—1931

29164-42

ОТПЕЧАТАНО
в типографии
„АЗГИЗ"а".
Баку, Б.-Морск., № 16

12056-58

Главлит 513 Зак. 81 Тираж 3000 Ст. ф. Б6

I. ՄԵՆՔ ՄՏԵԼ ԵՆՔ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆԸ

ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտրոնական Կոմիտեյի և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի դեկտեմբերյան պլենումը կարևորագույն ետապ է՝ մեր յերկրում ամբողջ ֆրոնտով սոցիալիստական հարձակման հետագա ծավալման համար։ «Այդ ծավալուն սոցիալիստական հարձակումն այժմ արդեն տարվում է սոցիալիզմի ժամանակաշրջանում։ Մեր յերկիրն, ուր սոցիալիստական սեկտորը ժողովրդական տնտեսության մեջ գրավել է բացարձակ գերակշռող դեր, մտել է ծավալուն սոցիալիստական հարձակման ժամանակաշրջանը, սոցիալիզմի շրջանը»։

«Նրանք, ովքեր Լոմինաձեյի պես բացատրում են մեր սոցիալիզմի շրջանը մտնելը, պարզապես կրկնում են տրոցկիստների տասծները. դա տրոցկիստական թեորիայի նորագույն մի ձևն է այն մասին, թե անկարելի է մեր յերկրում սոցիալիզմի կառուցումը...

«Ո՞վ-ում».—արդյոք, սոցիալիզմը կհաղթանակի կապիտալիստական տարրերին, թե կապիտալիզմը—սոցիալիզմին. այս հարցն արդյունաբերության մեջ վերջնականապես վճռված է հոգուտ սոցիալիզմի։ Այսպես է դրությունն այժմ մեր արդյունաբերության մեջ։

Իսկ ինչպես է գյուղական տնտեսության մեջ։ Գյուղական տնտեսության մեջ դեռ պայքար է գնում։ Մենք արդեն 1931 թվին գյուղական տնտեսությունում համայնացրած սեկտորի գերակշռություն կունենանք. մենք արդեն 1931 թվին կուլակության – վորպես դասակարգի վերացման գործում վճռական հաղողություններ կունենանք։ Մենք այստեղ էլ հսկայական քայլերով ենք առաջ գնում։ Մենք գնում ենք դեպի այն, վոր «ռվ-ում» հարցը մոտ ապագայում կլուծենք գյուղական տնտեսությունում նույնպես, ինչպես լուծել ենք արդյունաբերության և ապրանքաշրջանառության մեջ» (Կենտկոմի պլենումի արդյունքների մասին ընկ. Կագանովիչի արած զեկուցումից)։

Սակայն դա չի նշանակում, թե սոցիալիզմը մեզ մոտ կհաղթանակի «ինքնահոսով», «տարերային կերպով»։ Կենտկոմի պլենումի վորոշումները մոբիլիզացիայի են յենթարկում ամբողջ կուսակցությանը, ամբողջ բանվոր դասակարգին, կոլխոզնիկներին, չքավորներին և միջակներին այն հերոսական պայքարի շուրջը, վոր տարվում է կուսակցության դրած հսկայական խնդիրները հնգամյակի 3-րդ տարում իրագործելու համար։

«Ցեկող 1931 թիվը՝ սոցիալիզմի նոր հաղթանակների և նոր խոշորագույն հաղողություններ տարի է լինելու՝ կապիտալիզմի դեմ նրա մղած պայքարում։ Կոլլեկտիվացման ընդգավառում պլանի իրագործումը գյուղում սոցիալիստական տարրերի բացարձակ գերակշռություն

կտա՝ կապիտալիստական տարրերի վրա. կամրապնդի բանվոր դասակարգի ու գյուղացիության աշխատավոր մասսաների կապը և կավարտի Խորհրդային Միության սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը։ Դա կլինի համաշխարհային -պատմական նշանակություն ունեցող հաղթանակ»։ (Պլենումի բանաձևից—կոնտրոլային թվերի մասին)։

II. 1931 ԿՈՆՏՐՈԼԱՅԻՆ ԹՎԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. 1930 թ. արդյունքները—Խորհրդային Միությունում յեվ կապիտալիզմի յերկրներում

Կուսակցության 16-րդ համագումարի ժամանակից անցած կես տարին մի ավելորդ անգամ հաստատել է տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունը՝ կապիտալիստականից։ Այն ժամանակ, յերբ կապիտալի յերկրներում ամենադաժան արդյունաբերական կրիզիսն ավելի ու ավելի սրվում է, մենք ավարտել ենք 1930 թիվը 5-ամյա պլանի սկզբնական նախագծերը ահագին գերազանցումով։

«Ի՞նչ են ասում կուսակցության 16-րդ համագումարից հետո անցած վերջին ամիսների փաստերը։

1930 թվին (10 ամսում) Խորհրդային Միության արդյունաբերության արտադրանքն աճել է 25%-ով, այն ինչ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում արտադրությունն ը-

կել է 18,6%-ով, Անգլիայում - 8,4%-ով, Գերմանիայում—14,2%-ով և Լեհաստանում—26,2 տոկոսով։ Միայն Ֆրանսիայում մի փոքր, շատ աննշան աճում կա—2,5%-ով. բայց այնտեղ էլ, վերջին ժամանակներս այդ կանգ առած դրությունը սկսում է փոխվել տնտեսական կրիզիսի։ Ինչպես տեսնում եք, այդ տվյալները հաստատում են, որ համաշխարհային կրիզիսը ոչ միայն չի մեղմացել, այլև ավելի ուժեղացել է"։ (Կագանովիչ)։

Կենտկոմի պլենումը 1930 թ. մեր նվաճումների մասին հետևյալ գումարն է տվել.—

«Խորհրդային արդյունաբերությունը 1929—30 թ. ընդհանուր արտադրանքի 25% աճում է տվել և 5-ամյա պլանի այդ տարվա առաջադրությունը գերազանցել է 5%-ով. 1929-30 թվին Միության ամբողջ ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության տարեկան արտադրության չափը յերկու անգամից ավելի է գերազանցել մինչպատերազմյան տարեկան արտադրությանը։

«Ցանքային տարածությունները, որ 1928-29 թվին յեղել են 118 միլիոն հեկտար, անցած տնտեսական տարում հասել են 127,8 միլիոն հեկտարի։

«1930 թվին հացահատիկների ընդհանուր բերքը յեղել է 87,4 միլիոն տոննա՝ 1929 թվի 71,7 միլիոն տոննի դիմաց (աճումը—21,8%)։ Բամբակի ընդհանուր բերքը կկազմի 13,5 միլիոն ցենտներից ոչ պակաս՝ 1929 թվի 8,6 միլիոն ցենտների դիմաց։ Շաքարի ճակնդեղի ընդհանուր բերքը համապատասխան կերպով կազմում է 151,7 միլիոն ցենտներ՝ անցյալ տարվա 62,5 միլիոն ցենտների դիմաց։ Համայնացրած սեկտորի հացահատիկի ապրանքային արտադրանքի տեսակարար կշիռը 1930 թվին կազմել է ամբողջ ապրանքային արտադրանքի մոտ 50%-ը՝ 5-ամյակի վերջին տարվա համար յենթադրվող 43%-ի դիմաց։

«Կոլեկտիվացման ընդլավառում 5-ամյա պլանի առաջադրությունները բավականաչափ գերազանցված են։ Յեթե հաշվենք Խորհրդային Միության բոլոր ռայոնները և գյուղական տնտեսության բոլոր ճյուղերը (հողագործություն, անասնաբուծություն, ձկնորսություն և վորսորդություն), 1930 թ. դեկտեմբերի 1-ին արդեն կոլխոզներում յեղել են 6,150,000 գյուղացիական տնտեսություններից ավելի, այսինքն 24,1 տոկոսը։ Իսկ հիմնական հացահատիկային ռայոններում կոլեկտիվացման տոկոսը բարձրացել է 49,3%-ի։

«Ցերկաթուղային տրանսպորտի բեռների տեղափոխությունը հասել է անցած տնտեսական տարում 235 միլիոն տոննի՝ մի քառորդից ավելի գերազանցելով 5-ամյա պլանով 5-ամյակի 2-րդ տարվա համար նախագծածից։

«Բանվորների և ծառայողների ընդհանուր թիվը բավականաչափ գերազանցել է 5-ամյա պլանի նախագծածից։ Բանվորների աշխատավարձը 5-ամյակի 2 տարիներում բարձրացել է

12%-ով։ 5-ամյակի 2-րդ տարվա վերջին՝ 7-ժամյա բանվորական որվա է անցել արդյունաբերության մեջ գործող բանվորների ընդհանուր թվի 45,5%-ը։ Անցած ժամանակում անընդհատ բանվորական շաբաթվա (անընդհատականի) է անցել արդյունաբերության մեջ գործող բանվորների ընդհանուր թվի 67%-ը։ Այդ ամենի հետևանքով մենք հիմնականում վերացրել ենք գործազրկությունը» (Պլենումի բանաձևից)։

Այդ հսկայական նվաճումները մենք ունենք, չնայած, որ արդյունաբերության առանձին ճյուղերը մասամբ թերակատարել են պլանը,— «շնորհիվ այն բանի, որ առանձին ղեկավարները հույսը դրել են ինքնահոսի վրա, չեն կարողացել գլուխ կանգնել բանվորների ստեղծագործական նախաձեռնությանը, բոլոր կազմակերպությունների աշխատանքը դեռևս բավարար չափով չի վերակառուցվել, ներքին միջոցներն անբավարար չափով են ոգտագործվել, ֆինանսական, մատակարարող և կոոպերատիվ կազմակերպություններն անբավարար են աշխատել» (Աղրկոմկուսի (բ) Բագվի կազմակերպության ակտիվի բանաձևից—ընկ. Պոլոնսկու զեկուցման առթիվ)։

Չնայած պլանային առաջադրությունների այդ թերակատարմանը՝ 5-ամյա պլանի առաջադրություններն ընդհանուր առմամբ վոչ միայն կատարված, այլև գերակատարված են։ Հնգամյակի 2-րդ տարվա արդյունքները լավագույն ապացույցներն են՝ կուսակցության հիմնական գծի ուղիղ լինելուն և աջ ու «ձախ» ոպորտունիստների այն պնդումների տապալմանը, թե «Խորհրդային Միության ժողովրդական տնտեսությունը կրիզիսի մեջ է», թե «5-ամյակը տապալվել է» և այլն։ 2-րդ տարվա արդյունքները վոչ միայն ապացուցում են 5-ամյակի ռեալ և իրագործելի լինելը, այլև ապահովում են ամբողջ 5-ամյակը 4 տարում կատարելը, նախադրյալներ են ստեղծում սոցիալիստական շինարարության, յերկրի ինդուստրացման և գյուղական տնտեսության կոլեկտիվացման տեմպերի ել ավելի ուժեղացման համար։

«Խորհրդային Միության այդ տնտեսական վերելքի մեջ վճռական դեր խաղացել են կուսակցության ուղիղ քաղաքականությունը և բանվոր դասակարգի ու կոլխոզնիկների միլիոնավոր մասսաների ստեղծագործական ենտուզիազմը, աշխատանքային ակտիվության ահագին աճումը, (սոցմրցում, հարվածայնություն և հանդիպակաց պլաններ), որի նշանի տակ անցել են 5-ամյակի առաջին յերկու տարիները »(Կենտկոմի պլենումի բանաձևից)։

2. 1931 թվի կոնտրոլային թվերը յեվ նրանց նշանակությունը խորհրդային միության սոցիալիստական եկոնոմիկայի կառուցման համար

1931 թվի ժողովրդական տնտեսության պլանի մասին Կենտկոմի պլենումի վորոշումների իրագործումը՝ կնշանակի մեր յերկրի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը արդյունաբերության մեջ։ Սոցիալիստական վերա-

կառուցման մեջ ունեցած վճռական բեկման հիման վրա Կենտկոմի պլենումը տվել է հաստատուն դիրեկտիվներ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերաբերմամբ, որոնք ապահովում են՝

— Ժողովրդական յեկամուտի աճումը 35%-ով և 5-ամյա պլանի համարյա լրիվ կատարումը 1931 թվին ժողովրդական յեկամուտի վերաբերմամբ (49 միլիարդ՝ 5-ամյակի վերջին տարվա համար նախագծած 49,7 միլիարդի փոխարեն)։

— Արդյունաբերության մեջ հիմնական ներդրումներ 17 միլիարդ ռուբլի (անցյալ տարվա 10 միլիարդի փոխարեն)։

— Ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքի աճումը 45%-ով։

— Ցանքային տարածության չափը—143 միլիոն հեկտար։

— Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի կողմից պլանավորվող արդյունաբերության արտադրանքի ինքնարժեքի իջեցումը 10%-ով, մատակարարման ժողկոմատի կողմից պլանավորվողինը — 11%-ով և աշխատանքի արտադրողականության աճումը համապատասխան կերպով—28%-ով և 35%-ով։

— Միասնական ֆինանսական պլանի ծավալը—31,1 միլիարդ ռուբլի, որի մեջ պետական բյուջեն—21,2 միլիարդ յեկամուտով և 19,7 միլիարդ յելքով ու ռեզերվի գոյացում—1,5 միլիարդ ռուբլի։

Սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն ավարտելու համար հատուկ նշանակություն ունին Պլենումի վորոշումները՝

ա) այն մասին, թե 1931 թվին ծանր արդյունաբերության պլանը՝ 5-ամյակի վերջին տարվա համար յենթադրվող պլանի 98%-ին պիտի հասցնել.

բ) այն մասին, թե «1931 թվին Ուկրայնայի (տափաստան), Հյուսիսային Կովկասի, Ստորին և Միջին Վոլգայի (Զավոլժյե) գյուղացիական տնտեսությունների միջին հաշվով 80%-ից վոչ պակասը պիտի կոլեկտիվացնել. այդ ռայոնների համար դա նշանակում է հիմնականում ավարտել կոլեկտիվացումը և կուլակությանը—վորպես դասակարգ վերացնել։ Մյուս հացահատիկային ռայոնների—Կենտրոնական Սևահող Շրջանի, Սիբիրի, Ուրալի, Ուկրայնայի (անտառադաշտ) և Կազակստանի (հացահատիկային ռայոններ) համար ապահովել գյուղացիական տնտեսությունների 50%-ով կոլեկտիվացումը։ Սպառող շրջանների հացահատիկային տնտեսությունների 20—25%-ի կոլեկտիվացումն ապահովել։ Բամբակային և ճակնդեղային ռայոններում ապահովել տնտեսությունների ընդհանուր թվի 50%-ից վոչ պակասի կոլեկտիվացումը։ 1931 թվին միջին հաշվով Միության մեջ գյուղական տնտեսության բոլոր ճյուղերի գյուղացիական տնտեսությունների կեսից վոչ պակասի կոլեկտիվացումն ապահովել» (Պլենումի բանաձևից).

գ) այն մասին, թե միասնական ֆինանսական պլանը, որն «ընդգրկում է յերկրի բոլոր միջոցները—հիմնական շինարարությանը տրվող, համայնացրած տնտեսության շրջանառական միջոցները լրացնող, կուլտուրային, կառավարմանը և Խորհրդային Միության պաշտպանությանը տրվող, որն ամբողջ ժողովրդական յեկամուտի մոտ յերկու յերրորդականն ընդգրկում և վերաբաշխում սոցիալիստական շինարարության գործի համար» (Պլենումի բանաձևից)։

Այդ միասնական ֆինանսական պլանը՝ 5-ամյակի 2-րդ տարվա հաջողությունների հետ միասին՝ ապահովում է 3-րդ տարվա ժողովրդական տնտեսության պլանի կայունությունը, ռեալ և իրագործելի լինելը։

«Քանի որ մենք մինչև այժմ ել պլանավորել ենք գյուղական տնտեսության բնագավառում,—իսկ այնտեղ անգին մեծամասնությունը կազմում ելին գյուղացիական մանր տնտեսությունները,—դա միայն կոնտրոլային թվեր են յեղել, բայց ժողովրդական տնտեսության այնպիսի կայուն պլան չի յեղել, որպիսին 1931 թվի կոնտրոլային թվերն են։ 1931 թվի կոնտրոլային թվերը իրոք կայուն ժողովրդա-տնտեսական պլան են» (Կագանովիչ)։

«Սոցիալական կառուցվածքի, դասակարգերի և դասակարգային պայքարի տեսակետից առանձնապես կարևոր է այն փաստը, որ ժողովրդական յեկամտի միայն 18 տոկոսն է անհատական սեկտորին բաժին ընկնում, այնինչ 1929—30 թվին անհատական սեկտորը գրավում ել մոտ

26%։ Ահա այս հիմնական փաստը միանգամայն զինաթափ է անում ամեն մի թշնամու, ամեն մի ուկլոնիստի, ամեն մի ոպոզիցիոնների։ Հենց միայն այս փաստը մեր կուսակցության մեջ յեղած ամեն տեսակի ոպորտունիստների գերեզմանաքարն է» (Կագանովիչ։)

3. Ածուխը, մետաղը, տրանսպորտն, անասնապահությունը—մեծ ափխատանքների 3-րդ տարվա կենտրոնական պրոբլեմներն են

1931 թվի պլանի մեջ հատուկ տեղ է բռնում ծանր արդյունաբերությունը և ամենից առաջ ածուխն ու մետաղը։

«Ներդրումների հիմնական մասսան տրվում է ծանր արդյունաբերության հիմնական ճյուղերին. այսպես, որինակ, հիմնական ներդրումները սև մետաղագործության մեջ 1931 թվի գնելով կազմելու են 900 միլիոն ռուբլուց ավելի, քարածխային արդյունաբերության մեջ—480 միլիոն ռուբլի, նավթայինի մեջ—335 միլիոն ռուբլի և այլն»։

«Քարածուխի աճման համար նախագծված է 47,6%, չուգունինը—52,8%, նավթինը—35,4 տոկոս, ելեքտրատեխնիկայինը—82,5, տրակտորներինը—241,5% և այլն» (Կագանովիչ)։

Կուսակցության 16-րդ համագումարի այն վորոշման համաձայն, թե պետք է մի հզոր ածխա-մետաղագործական բազա ստեղծել Արևելքում, արդեն այս տարի մասամբ գործի կանցնեն Կուզնեցկոստրոյը և Մագնիտոստրոյը, վո-

բոնք լիովին բեռնավորման դեպքում տարեկան 1,7 և 2,5 միլիոն տոնն չուգուն կտան։

Բայց այս տարի ածուխի և չուգունի ստացման գործում դեռևս վճռական դերը կպատկանի Դոնբասին։

«Դոնբասի ածուխի ստացման ծրագիրը 1929-30 թվին կատարված է 90,5%-ով. 40 միլիոն տոննի փոխարեն ստացված է 36 միլիոն տոնն։ Մենք 1931 թվի համար 55 միլիոն տոնն ածուխի ծրագիրն ենք ընդունել, որն անցյալ տարին փաստորեն ստացված ածուխի համեմատությամբ 55%-ով ավելի է։

Այդ ծրագիրը կատարելու համար հենց հունվարին որական միջին հաշվով պիտի ստացվի 159,000 տոնն ածուխ, այնինչ այժմ ստացվում է 120,000 տոնն։ Պարզ է, որ ածուխի պրոբլեմի լուծումն ամբողջովին ընկնում է Ուկրայնայի կազմակերպության վրա։ 1931 թվին 56 միլիոն տոնն ածուխ մենք պետք է տանք, ինչ էլ որ լինի. դրա համար մենք բոլոր պայմաններն ունենք։ Ծրագրի ռեալ լինելու մասին վոչ մի կասկած չի կարող լինել»։

«Յերկրորդ հարցը մետաղի մասին է։ Այստեղ էլ Ուկրայնայի կուսակազմակերպությանը պատկանում է վճռական տեղ։ Այս տարի մեր գործարանները պետք է տանեն 5 միլիոն տոննից ավելի չուգուն և 4,5 միլիոն տոն պողպատ. դա նշանակում է՝ անցած տարվա համեմատությամբ չուգունն ավելացնել 15%-ով և պողպատը—54%-ով։ Այդ խնդրի լուծումը կապված է մեծ դժվարությունների հետ, բայց բոլշևիկները չպետք է վախենան դժվարություններից» (Կոսիոր)։

Տրանսպորտը, ինչպես մատնանշել է դեռևս 14-րդ համագումարը, «սոցիալիստական տնտեսության ամենահետամնաց մասերից մեկն է»։

«Յերկաթուղային տրանսպորտի փոխադրությունների շրջանառությունն անցյալ տարի հասել է 235 միլիոն տոննի և այդպիսով 5-ամյա պլանով 5-ամյակի 2-րդ տարվա համար նախագծած չափից անցել է մեկ քառորդով» (Պլենումի բանաձևից)։

1931 թվի համար Պլենումը հաստատել է՝ «յերկաթուղային փոխադրությունների ընդհանուր չափը 330 միլիոն տոնն՝ 5-ամյակի վերջին տարվա համար յենթադրվող 281 միլիոն տոննի փոխարեն»։

«Վերջապես, անասնաբուծության բնագավառում վորոշված է «Սկոտովոդի հոտը հասցնել 2,800,000 գլխի, Սվինովոդինը - 1,900,000 գլխի, Ովցեվոդինը 4,4 միլիոն գլխի, Կաթնայուղային տրեստինը—110,000 կով» (Պլենումի բանաձևից)։

Բանվոր դասակարգի և նրա կուսակցության հատուկ հսկողության տակ պիտի վերցնել ածուխի, մետաղի պլանային առաջադրությունների իրագործումը, անասնաբուծական պրոբլեմի լուծումը և ժողովրդական տնտեսության ամենահետամնաց ճյուղերից մեկի—յերկաթուղային և ջրային տրանսպորտի կարգավորումը «(Պլենումի բանաձևից)։

4. 1931 թվի կոնտրոլային թվերի հատուկ խնդիրները

Բացի դրանցից՝ 1931 թվի կոնտրոլային թվերը դնում են մի շարք ուրիշ խնդիրներ։ Ամենից առաջ՝ ա) Խորհրդային Միության պաշտպանության ուժեղացումը. *դա թելադրվում է այն բանով, որ մեր սոցիալիստական շինարարության հաջողությունների ազդեցությամբ «մեր թշնամիների կատաղությունն ու աստելությունը ուժեղանում »է և «միջազգային կապիտալիզմը տենդոտ կերպով պատրաստվում է գինված ինտերվենցիայի՝ ընդդեմ Խորհրդային Միության»* (Պլենումի բանաձևից)։

Մեզ համար հատուկ նշանակություն ունի՝ բ) արտադրանքի վորակի պրոբլեմը։

«Պետք է ինկատի ունենալ, որ մեր պլանի իրագործումը դնահատելիս վճռական նշանակություն ունեն վորակական ցուցանիշները՝ քանակականին հավասար։

Մտնելով մեր 5-ամյակի իրագործման 3-րդ տարին՝ պետք է մեր աշխատանքի վերահսկողությունն էլ ավելի ծավալել և նայել վոչ միայն քանակական ցուցանիշներին, այլև միաժամանակ կանգ առնել վորակական ցուցանիշների վրա. վորովհետև, յեթե անցյալ տարի, ասենք թե ինքնարժեքի իջեցումն արտահայտվել ենրանով, որ ամեն մի տոկոսը հավասար է յեղել 100 միլիոն ռուբլու, այնինչ այժմ դա արտահայտվում է արդեն 200—250 միլիոն ռուբլով»

(ընկ. Կիրովի զեկուցումից—Լենինգրադի կուսակտիվում)։

1931 թվի ժողովրդական տնտեսության պլանի կատարման պայմանն է՝ գ) ֆինանսական յեվ վարկային խիստ դիսցիպլինան ու ռեզերվներ ստեղծելը—*ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում։*

«Ֆինանսական պլանի և բյուջեյի հաջող կատարումն ուղղակի կախման մեջ է ժողովրդատնտեսական շինարարության բոլոր ճյուղերում քանակական և վորակական ցուցանիշների իրագործման հետ։ Առանց ֆինանսական պլանի ճիշտիվ իրագործման անհնար է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում նախագծված տնտեսական պլանի իրագործումը։ Պլենումն անհրաժեշտ է համարում բոլոր ֆինանսական որգանների աշխատանքի վճռական ուժեղացումը, ֆինանսական խիստ դիսցիպլինա և խնայողության ռեժիմ արմատացնելը, յեկամուտների անպայման իրագործումը. ամեն մի կազմակերպության մեջ ծախսերն ուղղակի կախված պիտի լինեն այն բանից, թե այդ կազմակերպությունը ինչպես է կատարում իր արտադրական և ֆինանսական պլանները. պետք է ամրապնդել չերվոնեցը և վճռական պայքար մղել ֆինանսական սիստեմի դերի և նշանակության թերագնահատման դեմ՝ սոցիալիստական շինարարության ներկա ետապում» (Պլենումի բանաձևից)։

Կոնտրոլային թվերով՝ յեկամուտները ծախսերից 1,5 միլիարդ ռուբլի ավելի պիտի լինեն

12056-58 24576

և, բացի այդ, Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի ռեզերվ պիտի մնա 500 միլիոն ռուբլի։

դ) «ԿԵՆՏԿՈՄԻ պլենումն առանձին սրությամբ դրել է շինարարության լայն ճակատում ցաք ու ցրիվ չլինելու հարցը. այդ տարվա համար նշանակված 5,5 միլիարդ ռուբլին 1931 թվին առաջին հերթին դնել սկսված շինարարության մեջ, վորպեսզի 1931 թվին ավարտելու հնարավոր ձեռնարկները գործի դցվեն և ստացվի վորոշ արտադրանք։ Ցենթադրվում է 1931 թվի վերջին գործի գցել 500 նոր ձեռնարկից վոչ պակաս։ Բոլոր հիմնական միջոցները, մասնավորապես իմպորտը, պետք է ուղղված լինեն այն բանին, վոր սկսված կառուցումները, վորքան կարելի է, շուտ ավարտվեն» (Կոսսիոր)։

5. Հնգամյակի 3-րդ տարվա գլխավոր խնդիրներն Ադրբեջանում

«ՎԵԿԱՊԵ-ի (բ) ԿԵՆՏԿՈՄԻ պլենումի վորոշումները Բաքվի և ամբողջ Ադրբեջանի կազմակերպության առաջ դնում են հսկայական նշանակություն ունեցող խնդիրներ. այդ վորոշումների, նույնպես և ՎԵԿԱՊԵ-ի (բ) ԿԵՆՏԿՈՄԻ նոյեմբերի 15-ին—նավթարդյունաբերության մասին հանած վորոշման իրագործման համար պահանջվում է ի մի գումարել կուսակցական և բանվորական մասսաների բոլոր ուժերը։ Դրա հիմնական նախապայմանն է կատարել, իսկ վորտեղ հնարավոր է գերակատարել 1931 թվին նավթահանման և նավթի մշակման քանակական ու վորակական ցուցանիշները. Խորհրդային Ադրբեջանում 1931 թվին բամբակի ցանքսերը հասցնել 205 հազար հեկտարի. 1931 թվին Ադրբեջանի բոլոր գյուղացիական տնտեսությունների 20–25%-ը կոլեկտիվացնել, իսկ բամբակային ռայոններում—50 տոկոսը» (Բաքվի կուսակտիվի բանաձևից՝ ընդունված ՎԵԿԱՊԵ-ի (բ) ԿԵՆՏԿՈՄի և ԿԵՆՏ. ՎԵՐ. ՀԱՆՁ. միացյալ պլենումի արդյունքների մասին ընկ. Պոլոնսկու արած զեկուցման առթիվ)։

1931 թվին Ադրբեջանի և Բաքվի ամբողջ կուսակազմակերպության ուշադրության կենտրոնում պիտի լինեն՝ նավթն ու բամբակը։

ա) Նավթը

Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության մեջ նավթի նշանակությունը վորոշվում է այն դերով, վոր նա խաղում է վառելիքի—եներգետիկայի հաշվեկշռի (վառելիք շարժիչների համար, մանավանդ շնորհիվ գյուղական տնտեսության տրակտորիզացիայի) և խորհրդային եքսպորտի, նաև յերկրի պաշտպանության կարողությունն ուժեղացնելու մեջ։

Չնայած մի շարք նվաճումներին, վոր կան արտադրության ծավալման բնագավառում, 1929-30 թվի և հարվածային յեռամսյակի արդյունքներն Ազնավթում չեն կարող բավարար համարվել։

«Չի կարելի հաշվի չառնել այն վրիպումները, սխալները, ճեղքվածքները, որ յեղել են առանձին մասերում։ Մանավանդ Բագվի կազմակերպությունը պետք է աչքի առաջ ունենա Աղնեվթի արդիֆինպլանի լրիվ չկատարելը 1929—30 թվին և, որ առանձնապես անթույլատրելի է, 30 թվի հարվածային յեռամսյակում։

Անցյալ տարվա բացասական յերևույթներից ամենից բնորոշն է քանակական ցուցանիշների յեսեվից ընկնելն ի վնաս վորակականի։ Որինակ, մեզնում—Աղնեվթում, նավթամշակման գործարաններում մենք դրա շնորհիվ արտահանական նավթամթերքների վերաբերմամբ այնպիսի դրության ենք հասել, յերբ մեր առաջ կանգնել է արտահանական պլանի խախտման վտանգը, և դա շնորհիվ այն բանի, որ մեր մի ամբողջ շարք ձեռնարկներում վորակական ցուցանիշներին ժամանակին բավականաչափ ուշադրություն չի դարձրվել» (ընկ. Պոլոնսկու զեկուցումից)։

Աղնեվթի աշխատանքը հարվածային յեռամսյակին բնորոշվում է հետևյալ թվերով.—

Նավթ է հանված 2,931 հազար տոնն՝
պլանի 93,6%։

Փորված է 116,2 հազար մետր՝ պլանի 93,9%

Մշակված է 2,170 հազար տոնն՝ նավթ՝
պլանի 93,6%

Բենզին է ստացված 112,4 հազար տոնն՝
պլանի 86,7%

Կերոսին է ստացված 443,5 հազար տոնն՝
պլանի 77,9%

Առանձնապես կարևոր է մատնանշել արտահանական պլանի ճեղքվածքը.—բենզինի վերաբերմամբ կատարված է 88,8%-ը, կերոսինի վերաբերմամբ 81,8%-ը և այլն։

Հանդիպակաց արդֆինպլանով 1931 թվի համար նավթի վերաբերմամբ հետևյալ առաջադրություններն են տրվում.—

Նավթահանություն—15 միլիոն տոնն՝
Հորատորություն—579 հազար մետր
Նավթամշակում—12,5 միլիոն տոնն

Այդ պլանն առաջին քայլ է իրագործելու համար ՎԵԿԱՊԵ-ի (բ) կենտկոմի նոյեմբերի 15-ի վորոշումը նավթի մասին։ Աղրբեջանի և Բագվի կուսկազմակերպության ամբողջ աշխատանքը պետք է յենթարկվի այդ վորոշման լիակատար իրագործման խնդրին։

«Կենտկոմի նոյեմբերի 15-ին նավթի մասին տրված դիրեկտիվների անպայման իրագործումը պետք է դառնա ամեն մի բջջի, ամեն մի առանձին կոմունիստի աշխատանքի մարտական ծրագիրը. և ներկա ետապում այդ տեսակետից պետք է կառուցվի ու դրանով վորոշվի ամբողջ կուսակցական աշխատանքի բովանդակությունը» (Բագվի կոմիտեյի բյուրոյի վորոշումից)։

«ՎԵԿԱՊԵ-ի (բ) կենտկոմը նոյեմբերի 15-ին վորոշվում է հանել նավթի մասին։ Այդ վորոշումն ասում է, թե առաջիկա տարում պետք է 15 միլիոն տոնն նավթ հանել։ Մենք պետք է

այդ պլանը հասցնենք վոչ միայն Ադնեվթի ապարատին, գործարանին, ագրեգատին, բրիգադային, այլ և ամեն մի բանվորի. վորպեսզի ամեն մի բանվոր հանդիպակաց շարժումով, իր հանդիպակած արդիֆինպլանով՝ սկսած իր ստանոկից, ագրեգատից, բրիգադից, ցեխից, ձեռնարկից՝ մոբիլիզացիայի յենթարկի ներքին միջոցները և այդպիսով վոչ միայն ապահովի այդ պլանի կատարումն, այլև ոգնի նրա գերակատարմանը։

«Դրա համար մենք պետք է այս տարի սոցմրցումն ու հարվածայնությունը և հանդիպակաց արդիֆինպլանը դեռևս չտեսնված մակարդակի բարձրացնենք, քանի վոր ունենք մասսաներիր կուտակված փորձը։ Մենք չպիտի բավականանք սոցմրցման և հարվածայնության զարգացման համար միայն ագիտացիա անելով։ Վոչ։ Մենք այժմ մեր ամբողջ մատակարարումը, մեր բոլոր տնտեսական և կազմակերպչական միջոցառումները պետք է ծառայեցնենք այն հարվածային, վորն իրոք աշխատանքի հերոս է մեր արդյունաբերությունում. նա պետք է առաջին հերթին ապահովվի ամեն մի անհրաժեշտ բանով։ Դրանով՝ ագիտացիայի, համոզելու հետ միասին՝ պետք է խրախուսել հարվածային շարժման և սոցմրցման զարգացումը։

«1931 թվին այլևս չպիտի խոսվի այն մասին, թե վոչ մի կոմունիստ և կոմյերիտական չի կարող լինել հարվածային շարժման ու հարվածային բրիգադաներից դուրս։ Կոմունիստ և կոմյերիտական չե նա, ով վոր չի մասնակցում հարվածային շարժմանը։ Նա մեր և համաշխարհային պրոլետարական հեղափոխության ավանգարդի ներկայացուցիչը չե, ինչ վոր պետք է լինի ամեն մի կոմունիստ։ Դրանք այնպիսի մարդիկ են, վորոնք լավագույն դեպքում կլինեն քաղաքական ոբլվատելներ և անարժան կոմունիստի կոչմանը, իսկ վատագույն դեպքում՝ մեզ խորթ դասակարգային ուժերի ագենտներն են մեր ներսում։ Համոզելով և ամեն կերպ այս բանը բացատրելով ավելի հետամնացներին, մենք պետք է չարամիտների վերաբերմամբ այնպես վարվենք, ինչպես վարվում են սոցիալիստական շինարարության ֆրոնտի դեզերտիրների հետ» (ընկ. Պոլոնսկու զեկուցումից)։

բ) Բամբակը

Նավթի հետ միասին Ադրբեջանում հսկայական նշանակություն ունի բամբակը։ Տեքստիլ արդյունաբերության լայնացումը, վոր նախագծված է կոնտրոլային թվերով, ամենից առաջ դեմ է առնում հումքի պակասությանը. պիտի ասել, վոր բամբակի պրոբլեմի լուծումը չի կարող լինել արտասահմանից բամբակ բերելու հաշվին։ Մոտ ժամանակներս մենք բամբակի վերաբերմամբ պիտի ազատվենք ոտարյերկրյա կախումից։

1930 թվի արդյունքները բամբակի վերաբերմամբ պարզապես անբավարար են։ Չնայած մի շարք հանդիսավոր խոստումներին, թե 1930 թվին 150 հազար բամբակ ցանելու պլանը կը-

կատարի, և այն հավատիացումներին, թե այդ պլանը կատարված է,—գործիքներով չափելը պարզել է, վոր այդ պլանն ավելի քան 20 հազար հեկտարով պակաս է կատարված։ Այն վորոշումը, թե հնգամյակի վերջին բամբակի բերքատվությունը 70%-ով պիտի բարձրացվի, վոչ միայն չի իրագործվում, այլ, ընդհակառակը, բերքատվությունը շարունակ ընկնում է։ Բամբակ հավաքելու պլանն ավելի քան կիսով չափ պակաս է կատարված և այլն։

«Տես, ուրիշ կերպ չեմ կարող անվանել այն գիծը, վոր տարվել է Ադրբեջանում բամբակի գործում, քան աջ ոպորտունիստական—գործնականում... Դուք բոլորդ... խաբել եք ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմին, խաբել եք Խորհրդային իշխանությանը, խաբել եք բանվոր դասակարգին, չեք կատարել ձեզ վրա Վերցրած և կուսակցության 16-րդ համագումարին հանդիսավոր կերպով ձեր հայտարարած պարտավորությունները» (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի բրիգադի ղեկավար ընկ. Ունշլիխտի—բամբակային խորհրդակցությունում ասած ճառից)։

«Վերջին տարիների ընթացքում՝ բամբակաբուծության բնագավառում Ադրբեջանում—Խորհրդային Ադրբեջանի ղեկավար որգանների կողմից սիստեմատիկ կերպով աղավաղվել է կուսակցության հիմնական գիծը. դրա շնորհիվ չեն կատարվել բամբակամթերման պլանները, վորոնց թվում 1930 թվի միանգամայն ռեալ պլանը։

Կուսակցության 16-րդ համագումարին և ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմին ներկայացրվել են

անճիշտ տեղեկություններ՝ 1930 թվի բամբակային ցանքսերի դրության մասին. Խորհրդային Ադրբեջանի ղեկավար որգանները պարտավորություններ են հանձն առել՝ ժամանակին և անհրաժեշտ տնտեսական-քաղաքական միջոցառումներով այդ պարտավորությունների իրագործումն ապահովելու։

«Այդ բոլորի հետևանքն այն է եղել, վոր Խորհրդային Ադրբեջանի բամբակային տնտեսության բնագավառում առաջ է եկել խոր ճեղքվածք (բերքատվության ցածրանալը, ջրային տնտեսության ծանր դրությունը և այլն), վոր բամբակի մթերման 1930 թվի պլանի միայն 40 տոկոսն է կատարվել մինչև 1931 թվի հունվարի 1-ը. այդ բանը չեր կարող չանդրադառնալ 1931 թվի բամբակացանի կամպանիայի նախապատրաստության վրա և Խորհրդային Միության տեկստիլ արդյունաբերությանը լուրջ վնաս է հասցրել։

«Միայն, ներկա տարվա աշնանը Ադրկոմկուսի ղեկավարությունը փոխելուց հետո ու շնորհիվ Անդրյերկրկոմի նոր ղեկավարության և ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի ներկայացուցիչների անմիջական գործառնական միջամտության՝ հաջողվել է վերջին ժամանակներս արմատական բեկում առաջ բերել Խորհրդային Ադրբեջանի ղեկավար որգանների վերաբերմունքի մեջ—դեպի բամբակաբուծությունը» (Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին կից տեղի ունեցած բամբակային խորհրդակցության բանաձևից)։

«Մեզ համար ամենից վատն է բամբակի դրությունը, որովհետև բամբակի մթերումների պլանն Ադրբեջանում կատարված է միայն 40 տոկոսով։ Մենք ուղղակի, բացեիբաց պետք է խոստովանենք, որ այդպիսի խայտառակություն ոչ Բաքվի կազմակերպությունը, ոչ Ադրբեջանի կազմակերպությունն այլևս թույլ տալ չեն կարող և թույլ չեն տա» (ընկ. Պոլոնսկու ճառից)։

Ամբողջ Ադրբեջանի և, մասնավորապես, Բաքվի կուսակազմակերպության մարտական խնդիրն այժմ պետք է լինի 1931 թվի բամբակի կամպանիայի տանելը և, ամենից առաջ, 205 հազար հեկտար բամբակ ցանելու պլանի 100%-ային իրագործումը, բամբակի ցանքսերը ջրով ապահովելը և այլն։

Այդ պլանի իրագործումը տեղի կունենա ամենասուր դասակարգային պայքարի, կուլակային տարրերի ամենակատաղի ընդդիմադրության պայմաններում, որոնք փորձելու են խախտել բամբակի կամպանիան։ Կուլակային այդ տրամադրությունները սերտ կերպով և անմիջապես շաղկապվում են վնասատուների հետ, որ յերևան են հանված Խորհրդային Ադրբեջանի Պետպլանում և Հողժողկոմատում։

«Վնասատուները դեմ են բամբակի ցանքսերի լայնացմանը, այլ աշխատում են ամենամեծ չափերով լայնացնել ցորենի ցանքսերը։ Նրանք միանգամայն բավարար են համարում բամբակի այն քանակությունը, որը կապահովի Ադրբեջանի տերիտորիայում յեղած տեկստիլ ֆաբրիկները։ Նրանք անհրաժեշտ են համարում մեծացնել ցորենի տարածությունն այն բանի համար, որ «կախման» մեջ չլինենք Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունից» (ընկ. Ունշլիխտի ճառից)։

Խորհրդային Ադրբեջանի Պետպլանի և Հողժողկոմատի վնասատուները փոխանակ բամբակի ցանքսերը լայնացնելու՝ ցորենը դուրս մղելու հաշվին, դեռևս այս տարվա աշնանը բամբակային ռայոններին ցորեն ցանելու մեծացրած առաջադրություններ են տվել, ստիպել են բամբակի համար պիտանի տարածություններում ցորեն ցանել և այլն։

1931 թվի բամբակի պլանի իրագործումը պահանջում է արմատական բեկում առաջ բերել բոլոր կուսակցական, խորհրդային, կոոպերատիվ և հասարակական կազմակերպությունների աշխատանքում. նրա իրագործումն անրաժանելի է այն պայքարից, որ մղվում է գյուղական տընտեսության սոցիալիստական վերակառուցման համար, և առաջին հերթին ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի պլենումի այն վորոշման կատարումից, որ ասում է, թե 1931 թվին պիտի կոլեկտիվացնել բամբակային ռայոնների անտեսությունների 50%-ից ոչ պակաս։

Բամբակային պլանի համար մղվող պայքարում առաջնահերթ խնդիր է՝ իրագործել այն բոլոր միջոցառումները, որոնք կապված են բամբակի ցանքսերը ջրով ապահովելու հետ։

«Կենտկոմը կտրուկ կերպով պահանջում է Ազվոդխոզից և խորհրդային ու տնտեսական որգաններից անհապաղ բեկում առաջ բերել ջրատնտեսական աշխատանքների մեջ և ռայոնական կուսակազմակերպությունների իսկական բոլշևիկյան ղեկավարություն հաստատել՝ բամբակային կամպանիան նախապատրաստելու վերաբերմամբ. դրա համար՝ լայն մասսայական աշխատանքների հիմունքներով՝ ջրատնտեսական աշխատանքներին պիտի քաշել գյուղի կոլխոզային և չքավորա միջակային մասսաներին,—վճռական հարված տալու համար կուլակին, որն ուժեղացնում է հակախորհրդային աշխատանքը, և ուժեղ հակահարված տալու ինքնահոսի տրամադրություններին, պասսիվությանը, անճկունությանը՝ այդ կարևորագույն ժողովրդատնտեսական խնդրի լուծման գործում» (Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումից)։

Ուշադրությունը կենտրոնացնելով 1931 թվի բամբակային կամպանիայի նախապատրաստության վրա՝ մենք, սակայն, չենք կարող անցյալ տարվա բամբակի հավաքելը վերջացած համարել։ Այդ հավաքումը պիտի շարունակվի մինչև այն ժամանակը, յերբ ամբողջ բամբակը մինչև վերջին կիլոն հավաքված լինի։ Մոտ շաբաթների մարտական լոզունգն է՝ «շարունակել 1930 թվի բերքի բամբակի հավաքումը—մինչև դաշտերից վերջին կնդուղը քաղելը, թույլ չտալով, վոր բամբակը մշակողի տանը մնա» (Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի կից՝ բամբակային խորհրդակցության բանաձևից)։

«Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը և Կենտ. Վեր. Հանձնաժողովը, իսկ տեղերում Ռայկոմները և Ռայ. Վեր. Հանձ պետք է խիստ վերահսկողություն սահմանեն և ստուգեն ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի, Անդրյերկրկոմի և Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի բամբակի մասին հանած վորոշումների կատարումը։ Ամեն մի փորձ, վոր կարվի սխալ տեղեկություններ տալու գործի իսկական դրության մասին կամ կխափանի կուսակցության դիրեկտիվները, պետք է պատժվի իբրև աջ թեքում և մարտական հրամանի խախտում, մինչև իսկ վռնդելով կուսակցությունից» (նույն տեղը)։

III. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ և ԿՈՂՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Բանվոր դասակարգի նյութական դրության հետագա բարելավումը — ինդուստրիացման յեվ կոլեկտիվացման հաջողությունների հետևանքով

Կուսակցության հիմնական գծի անշեղ տանելու հիման վրա՝ աշխատավորների նյութական և կուլտուրական մակարդակն ավելի և բարձրացել։

1931 թվի կոնտրոլային թվերը բանվոր դասակարգի նյութական դրության հետագա բարելավումն են նախատեսում։ Նախատեսվում է բանվոր դասակարգի թվի 2 միլիոնով ավելացում, արդյունաբերական բանվորների աշխատավարձը 6%-ով, իսկ յերկաթուղային բանվորներինը 8%-ով բարձրացում։

Նախատեսվում է, որ մինչև 1931 թվի վերջը 7-ժամյա բանվորական որվա կանցնեն բոլոր յերկաթուղային բանվորները, Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի կողմից պլանավորվող արդյունաբերությունում աշխատող բոլոր բանվորների 92%-ից վոչ պակաս և մատակարարման ժողովրդական կոմիսարիատի կողմից պլանավորվող արդյունաբերության բանվորների 52%-ը։ 1,1 միլիարդ ռուբլի պետք է մտցրվի յերկաթուղային շինարարության մեջ, անցյալ տարվա 582,5 միլիոն ռուբլու փոխարեն։

«Յերկրի ինդուստրիացման գործում կուսակցության ու բանվոր դասակարգի ունեցած հաջողությունները, հացահատիկային պրոբլեմի հաջող լուծումը, անասնապահական սովխոզների և կոլխոզների արագ տեմպերով ծավալումն ու թեթև ինդուստրիայի ուժեղ զարգացումն ապահովում են կուսակցության XVI համագումարի կողմից տրված խնդիրների անպայման լուծումը, այն է—«իրականացնել ռեալ աշխատավարձի վերաբերմամբ նշված բարձրացումն ու մատակարարող ցանցի աշխատանքների բարելավումը՝ առանձնապես սպառողական կոոպերացիայի գծով» (Կենտրոնական Կոմիտեյի Պլենումի բանաձևից)։

1931 թվին լայն սպառման արդյունաբերական ապրանքների ֆոնդը պետք է ավելանա 3,1 միլիարդ ռուբլով, և մանր վաճառքի շրջանառությունն անցյալ տարվանից ավելի կլինի 25-30%-ով։

«Համայնեցրած սեկտորի աճումն ու կարտոֆելին և բանջարեղենին հատկացրած ցանքսային տարածության ընդարձակումը կարող են արդեն 1931 թվի ընթացքում լիովին ապահովել բանվորական մատակարարումն ու արդյունաբերության՝ բանջարեղենի և կարտոֆելի վերաբերմամբ ունեցած պահանջները» (Կենտկոմի պլենումի բանաձևից)։

«Այս տարի կենտրոնացրած կարգով մենք ավելի կմատակարարենք, քան անցյալ տարիները։ Մասնավորապես այս տարի կաճի հացի, ձավարի ու շաքարի մատակարարումը. շաքարի մատակարարումը կաճի 36 տոկոսով, չհաշված կոնդիտերային ապրանքները. ձկան մատակարարումը կավելանա 25 տոկոսով, չհաշված կոնսերվները։ Ինչ վերաբերում է բանջարեղենին, ապա այս տարի հիմնականում ապահովում ենք բանվոր բնակչությանը կարտոֆելով և կաղամբով» (Կագանովիչ)։

1931 թվին բանվորական մատակարարման բնագավառում կենտրոնական խնդիր է հանդիսանում մսի պրոբլեմի լուծումը։

«Կուսակցության 16-րդ համագումարի դրած խնդիրը,—այն է «մի տարուց հետո հնարավորություն ստեղծել մսի կողմից լիովին մատակարարելու» (Ստալին, Կենտրոնական Կոմիտեյի քաղաքական հաշվետվություն) բոլոր գոյություն ունեցող հնարավորություններն ոգտագործել՝ հենց այս տարի կազմակերպելու հիմնական արդյունաբերական կենտրոններին լավագույն կերպով միս մատակարարելու խնդիրը՝ պահանջում

ե կուսակցության ու բանվոր դասակարգի ուշադրությունը և ուժերը համախմբել մասմթերումների շուրջն, ինչպիսին կուսակցությունն արել է հացամթերումների վերաբերմամբ» (Պլենումի բանաձևից)։

Մսի պրոբլեմը մենք լուծում ենք և կլուծենք նույն մեթոդներով, ինչ մեթոդներով արդեն հացի պրոբլեմն ենք լուծել։

«Կուսակցության 16-րդ համագումարը գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրների կենտրոնում է դրել անասնապահական պրոբլեմի լուծման խնդիրը՝ անասնապահական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղիներով՝ կոլխոզների ու սովխոզների զարգացման հիման վրա։

Մեր գլխավոր ուղին—սովխոզների ու կոլխոզների միջոցով անասնապահական խոշոր տնտեսության ուղին է, որ չպետք է թուլացնեիդեպի անհատական սեկտորը յեղած ուշադրությունը։

Կուսակցության 16-րդ համագումարը մեծ ուշադրություն է դարձրել անասնապահության հարցի վրա և պահանջել կուսկազմակերպություններից՝ դրան ամենամեծ ուշադրությունը դարձնելու։ Կուսակցության 16-րդ համագումարից հետո անցկացած վեց ամիսներն ապացուցել են աջ իդեոլոգների ու պրակտիկների հոռետես յեզրակացությունների մնանկությունն ու վոչնչությունը։ Համագումարի նշած պլանը հաջողությամբ է իրագործվում, բայց կուսակցական, խորհրդային և տնտեսական կազմակերպությունների խնդիրը նրանում է կայանում, վորպեսզի

բարելավեն սովխոզների աշխատանքի վորակը և անասնապահության կոլեկտիվացման աշխատանքն ընդլայնեն։ Միաժամանակ պլենումը ցուցումներ է տվել հացամթերումների պլանն իրագործելու և բանվորներին անընդհատ միս մատակարարելն ապահովելու աշխատանքն անպայման ուժեղացնելու անհրաժեշտության մասին» (Կագանովիչ)։

2. Մատակարարման վերաբերվող ամբողջ աշխատանքն ինդուստրիացման գործին յենթարկել

«Սպառողական կոոպերացիան պետք է իր աշխատանքն այնպես վերակառուցի, վոր ամենից առաջ անպայման ապահովվեն սոցիալիստական շինարարության կարևորագույն բնագավառներն ու մատակարարման գործը կապվի արտադրական պլանների իրագործման, աշխատանքի արտադրականության բարձրացման, բանվորական ուժի հոսունության դեմ պայքարելու, աշխատանքի սոցիալիստական ձևերի կազմակերպումը (սոցմրցություն, հարվածայնություն և այլն) խրախուսելու հետ։ Զափազանց կարևոր նշանակություն է ստանում վերջին ժամանակներս ֆաբրիկներում ու գործարաններում ծավալված փակ բաշխիչների ցանցը, վորպես նոր, իրան արդարացրած, մթերքների դասակարգային բաշխման կազմակերպչական ձև։ Կուսակցական, խորհրդային, պրոֆեսիոնալ ու կոոպերատիվային կազմակերպությունների ուշադրու-

թյունը պետք է կենտրոնացրած լինի փակ բաշխիչների աշխատանքը բարելավելու խնդրի վրա, վորտեղ դեռ մի շարք շատ կոպիտ թերություններ են նկատվում (անբավարար շեշիդ, հերթեր, մեծ շտատներ և այլն), վորոնք հաճախ սպառող բանվորների աչքում նսեմացնում են այն առավելությունները, վոր բանվորական մատակարարումը կազմակերպելու այդ նոր ձևի մեջ է պարփակված» (Պլենումի բանաձևից)։

3. «Դուրս մղել կոոպերացիայից չարչիական վոգին»

Կենտրոնական Կոմիտեյի պլենումն իր բանաձևերում մատնանշել է, վոր չնայելով բանվորական մատակարարումն ուժեղ կերպով բավարարելու համար մեր ունեցած հնարավորություններին՝ այնուամենայնիվ այդ հնարավորությունները շատ բանում չեն ոգտագործվում, շնորհիվ միս և բանջարեղեն մատակարարելու գործում Մատակարարման Ժողկոմատի և կոոպերացիայի աշխատանքի անբավարար լինելուն։

«Սպառողական կոոպերացիայի կարևորագույն թերություններ են հանդիսանում՝ «վորոշ նեպմանական վոգի»—աշխատանքում, ինքնահոսի տարրերը, բյուրոկրատիզմը և ոպորտունիզմը գործնականում, վոր ապրանքների կուտակում է առաջացրել ապրանքների պակասության պայմաններում, աղտոտել ապարատը խորթ ու վնասատու տարրերով, թուլացրել հասարակական սնունդի գործի կարգավորումը կազմակերպելու աշխատանքը, թուլացրել սպառողների

կոոպերացրած մասսաների մասնակցությունը սպառողական կոոպերացիայի հսկողությանն ու ղեկավարությանը մասնակցելու գործին և վերացրել ծավալուն ինքնաքննադատությունը... Կուսակցական և պրոֆմիութենական ու կոոպերատիվային ակտիվի ջանքերով պետք է սպառողական կոոպերացիայի աշխատանքից դուրս վռնդվի չարչիական վոգին. . . Կոոպերացիայի ապարատը պետք է մաքրվի այնտեղ բուն դրած մենշևիկ-եսերական և բյուրոկրատ տարրերից, պետք է վճռական պայքար մղվի գործնական աշխատանքում յեղած ոպորտունիզմի, ինքնահոսի վրա հույս դնելու դեմ, ինչպես և մասսաներից ու սոցիալիստական արտադրության շահերից մատակարարողական աշխատանքի կտրվածության դեմ, վոր նկատելի է մի շարք կոոպերատիվային կազմակերպություններում։ Միմիայն մատակարարման և բաշխման սոցիալիստական ձևերի ուղիղ կազմակերպումը՝ հիմնական խնդիրների շուրջը—մասսաների հասարակական մոբիլիզացիայի հիման վրա—ամբողջ աշխատանքը վճռականորեն վերակառուցելով՝ սպառողական կոոպերացիան կկարողանա իր աշխատանքների մեջ արմատական բարելավում մտցնել» (Պլենումի բանաձևից)։

Պլենումն իր բանաձևում առանձնապես շեշտել է, վոր պետք է կոոպերացիայի աշխատանքի վրա վերևից մինչև ներքև մասսայական կոնտրոլ սահմանել և դրա հետ միաժամանակ՝ կոոպերատիվային ստորին որգաններում ապահովել ընտրականությունը։

«Կոոպերացիայի կազմակերպչական հարցում շատ կոպիտ սխալ է թույլ տրվել. գյուղում լիկվիդացիայի են յենթարկել ընտրովի սպառկոոպը և ընտրովի մարդկանց փոխարեն՝ սահմանափակվել են խանութի վարիչ նշանակելով։ Գյուղացիք, իհարկե, այնքան էլ վստահություն չեն տածում դեպի այդ խանութի վարիչը, որովհետև այդ վարիչների մի նշանավոր մասը խորթ մարդիկ են։ Բացի դրանից, այդպիսի պայմաններում՝ կոոպերացիայում վոչ մի ակտիվ ստեղծել չի կարելի։ Ուստի մենք վորոշել ենք վերականգնել գյուղում ընտրական կոոպերացիան։ Պետք է ֆաբրիկների ու գործարանների բաշխիչներին կից, վորոնք նշանավոր քանակությամբ փայատերեր ունին՝ անմիջականորեն Մոսկվայի Սպառկոոպին յենթարկված ընտրական բանվորական կոոպերատիվներ ստեղծել։ Դա կստեղծի կոոպերատիվային ակտիվ. դա կստեղծի կոոպերատիվային մասսաների ինքնագործունեություն» (Կագանովիչ)։

Կոոպերացիայի աշխատանքում կենտրոնական տեղ պետք է գրավեն փակ բաշխիչները։

«Կարելի է ասել, վոր ինչպես ձեռնարկություններում հարվածային բրիգադներն այն լծակները հանդիսացան, վորից բռնելով՝ հաջողվեց պրոֆմիություններին յերեսը դեպի արտադրություն դարձնել, նույնպես և փակ բաշխիչների շարժումը վորպես շարժում ներքևից՝ պետք է շատ խոշոր դեր խաղա կոոպերացիայի բոլոր ոլորտներում» (Կագանովիչ)։

IV. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Խորհուրդների ներկա վերընտրությունների նշանակությունը

«Խորհուրդների նոր ընտրությունների քաղաքական նշանակությունը նրանում է կայանում՝ վոր ներկա վերընտրությունները պետք է խորհուրդների ամբողջ աշխատանքի գործում արմատական վերակառուցման կարևորագույն միջոց հանդիսանան, վերակառուցում՝ համապատասխան վերակառուցողական ժամանակաշրջանի խնդիրների» (Պլենումի բանաձևից)։

Խորհուրդները պետք է հենվեն «խորհրդային նոր ակտիվի վրա, վոր աճել է ի դեմս արտադրությունում ունեցած հարվածայինների և գյուղի կոլխոզնիկների, միաժամանակ չմոռանալով անհատականներին, չքավորին ու միջակին, այսինքն՝ վաղվա կոլխոզնիկին, մասնավորապես կանանց, թե քաղաքի և թե գյուղի յերիտասարդության, խորհուրդների աշխատանքին մասնակցող անկուսակցականներին, վորոնց բավականաչափ ուշադրություն չի դարձվում։ Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի պլենումը մասնանշել է, վոր անհրաժեշտ է քաղաքի և գյուղի խորհրդային լայն դեմոկրատիան մի նոր աստիճան բարձրացնել, այնպես անել, վոր խորհուրդները գլուխ անցնեն կոլխոզային շարժմանն ու կուլակությունը լիկվիդացիայի յենթարկելու պայքարին» (ընկ. Պոլոնսկու զեկուցումից)։

Ադրբեջանի պայմաններում խորհուրդների վերընտրությունները հատուկ նշանակություն են ստանում։

„Ազգային հանրապետության ու բազմազգի Բաքվի պայմաններում՝ մեզ համար առանձնապես կարևոր է հաշվեառել լենինյան ազգային քաղաքականությունը խորհուրդների կողմից կյանքի մեջ մտցնելու պրակտիկայի ստուգման մասին կուսակցության Կենտրոնական Կոմիտեի տված հրահանգը“ (նույն տեղը)։

Առանձնապես անհրաժեշտ է աշխուժացնել Բաքխորհրդի աշխատանքն ու հեղինակությունը բարձրացնել։

„Այն Բաքխորհուրդը, որ այժմ մենք ունինք, պետք է ուղղակի ասել, որ, դժբախտաբար, այդ բանը բավականաչափ ապահովել չի կարող։ Այդ կողմից մեզ պետք կլինի մի շարք շատ լուրջ միջոցներ ձեռք առնել։ Պետք է պատշաճ բարձրության վրա դնել բանվորական, գյուղացիական և կարմիր՝ բանակային պատգամավորների մեր փառավոր Բաքվի խորհուրդը“։

„Մեզ հարկավոր է միանգամայն վոչնչացնել բանտիդիզմն Ադրբեջանում։ Հեղափոխության 14-րդ տարում այնպիսի յերևույթներն անհանդուրժելի են Խորհրդային Միությունում։

„Մենք պետք է ամրապնդենք 16-րդ համագումարի վորոշումների համաձայն վերակազմված ռայոնները և Բաքվից ու նախկին շրջանային կենտրոններից մոբիլիզացիայի յենթարկենք զանազան մասնագիտություն ունեցող 1000 կոմունիստ և անկուսակցական գործիչներ, վորի մասին վորոշում է կայացրել ակտիվը՝ ընկ. Կիրովի զեկուցման վերաբերմամբ։ Այդ վորոշումը թույլ է կատարվում, իսկ ժամանակն անցնում է, մանավանդ վոր մենք պետք է վոչ միայն ռայոններն ամրապնդենք, այլ և պետք է գյուղերին ել ոգնության հասնենք“ (նույն տեղը)։

2. Խորհուրդների աշխատանքում յեղած ոպորտունիզմի դեմ

„Խորհուրդների աշխատանքի անհրաժեշտ վերակառուցումը կարելի է կատարել, բարձրացնելով խորհուրդների — վորպես կուսակցության հիմնական դիծն իրականացնողների դերը, վորն անհաշտ թշնամի է ինչպես աջ, նույնպես և „ձախ“ ոպորտունիզմի վերաբերմամբ։ Բարձրացնել խորհուրդների դերը՝ կուսակցության լենինյան քաղաքականությունը գործնականում իրագործելու մեջ, — այսպես է վերընտրական կամպանիայի հիմնական քաղաքական խնդիրը“ (պլենումի բանաձևից)։

„Ինչով է բացատրվում խորհուրդների այնպիսի հետ մնալը, վոր 1930 թվին մենք հարկադրված ենք այդ հարցը սուր կերպով դնելու։ Դա մասամբ բացատրվում է խորհուրդների կառուցվածքով, վորոնք ավելի լայն մասսաներ են իրանց մեջ պարփակում, քան կուսակցությունն ու պրոֆմիությունները։ Բնական է, վոր խորհուրդներում մանր-բուրժուական ազդեցությունը ավելի մեծ չափով է անդրադառնում, քան կուսակցության մեջ ու պրոֆմիություններում,

մանավանդ վոր պետական ապարատում դեռ ունինք հին չինովնիկների, հին մասնագետների ու բյուրոկրատների մի մասը և այդ բյուրոկրատիզմը հաճախ յերևան է գալիս վոչ միայն անկուսակցականների մոտ, այլ և հաճախ վարակում է կոմունիստների այն մասը, վորը չի հասկանում, թե ինչպես պետք է տանել կուսակցության գիծը" (Կագանովիչ)։

«Խորհուրդները, գործկոմները ու պետական ապարատը պետք է ավելի քան մինչև այժմ է յեղել՝ կուսակցության հիմնական գիծը տանողներ լինին։ Ուրիշ խոսքով՝ պետք է բարձրացնել խորհուրդների, վորպես կուսակցության հիմնական գիծը տանողների՝ դերը։ Ցես շեշտում եմ այս բանաձևերի՝ „բարձրացնել խորհուրդների, վորպես կուսակցության հիմնական գիծը տանողների՝ դերը"։ Մենք պետք է բարձրացնենք խորհուրդների դերը, վորպեսզի նրանք իսկապես կուսակցության հիմնական գիծը տանողներ լինին։

„Այդպիսին դառնալով խորհուրդներն ավելի մեծ չափով կզբաղվեն տնտեսությամբ, բանվորների կարիքների սպասարկությամբ, մատակարարման հարցերով. նրանք ավելի մեծ չափով կղեկավարվեն սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը, քան յեղել է մինչև այժմ, յերբ նրանք միայն հանդիսավոր ժողովներում ելին այդ մասին խոսում։ Ցեվ առաջիկա ընտրական կամպանիան նրանով է կարևոր, վոր այդ կամպանիան մի նոր խթան պետք է դառնա խորհուրդների աշխատանքը նոր սկզբունքներով

վերակառուցելու։ Այդ կամպանիան մի խթան պետք է դառնա, վոր մենք խորհուրդների շուրջը իսկապես մարտական ակտիվ ստեղծենք, վոր խորհուրդները քաշենք հարվածային բանվորներ և գյուղի կոլխոզնիկներ, վոր խորհուրդները գյուղի վերակառուցման գործոններ դառնան" (Կագանովիչ)։

Այդ պատճառով առանձին նշանակություն է ստանում այն հանգամանքը, վոր ստուգվի և ամեն որ հսկվի, թե մեր պետական ամբողջ ապարատը վորքան ճիշտ է կատարում կուսակցության վորոշումները։ Հատկապես այդ նպատակով, ինչպես հայտնի է, Խորհրդային Միության Ժողկոմխորհին կից՝ կատարման կոմիտե է ստեղծված՝ ընկ. Մոլոտովի գլխավորությամբ։

„Այժմ մեզ վրա առանձնապես խնդիր է դրվում իսկապես ապահովելու կուսակցության բոլոր վորոշումների իրագործման ստուգումը, վորի մասին շատ է գրել ու խոսել Լենինը։

„Մենք գեղեցիկ բանաձևներ քիչ չունինք. և կան տարբեր,—յեթե ուզում եք, այդ ել յուրատեսակ ոպորտունիզմ է,—վորոնք շատ ճարպատեսակ ոպորտունիզմ են, բայց խուսափում են այդ բանաձևերն նում, բայց խուսափում են այդ բանաձևերն իրագործելուց. հասկանալի է, վոր վոչ միայն Բանվորա-Գյուղացիական Տեսչության և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի Ժողկոմատներն, այլ և ամբողջ կուսակցությունը պետք է ապահովեն կատարումն ստուգելու խնդիրը" (Պոլոնսկի)։

Այս բոլորի լուսաբանությամբ անհրաժեշտ է նշել ընկ. Մոլոտովի Խորհրդային Միության Ժողկոմխորհի և Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի նախագահ նշանակվելը։

„Ընկ. Մոլոտովը, վոր 10 տարի Կենտրոնական Կոմիտեի քարտուղար է յեղել, վորն աշխատանքում իրան ցույց է տվել վորպես կայուն և կուսակցության հիմնական գծի համար տոկուն պայքարող, մենք հավատացած ենք, վոր ընկ. Մոլոտովը Ժողկոմխորհի նախագահի պաշտոնում իր՝ ամբողջ աշխատանքով՝ կուսակցական և խորհրդային որգանների գործողության իսկական միասնությունը կապահովի“ (Կագանովիչ)։

V. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԻ ՀԱՄԱՐ, ԱՋ և „ՁԱԽ“ ՈՊՈՐՏՈՒՆԻԶՄԻ ԴԵՄ

„Մեր կուսակցության հիմնական գիծը, վոր կենտկոմն է տարել մինչև 16-րդ համագումարը և դրանից հետո՝ փայլուն կերպով քննություն տվավ։ Զախջախված է ոպոզիցիոներների, ուկլոնիստների գիծը։ Հաղթանակել է կուսակցության գիծը։ Իմ բերած թվերն ու փաստերը, Կենտրոնական Կոմիտեի վորոշումներն ու մեր ունեցած արդյունքները ցույց են տալիս, վոր այժմ մենք իսկապես մի ետապ ենք անցնում, վորը սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն է ավարտում։ Դա մեր կուսակցության Լենինյան Կենտրոնական Կոմիտեի լավագույն վկայականն է“ (Կագանովիչ)։

Զախջախված է հակահեղափոխական տրոցկիզմը, միանգամայն ջախջախված են աջ ուկլոնիստների գուշակությունները, կուսակցական և անկուսակցական ամենալայն մասսաների առաջ մերկացրված է Սիրցով-Լոմինաձե աջ—„ձախ“ անսկզբունք բլոկի դեմագոգիական զրպարտությունը։ Աջ թեքման նախկին առաջնորդ ընկ. Ռիկովն ու Բուխարինն ստիպված եին պլենումում իրանց սխալներն ընդունել։

«Պլենումին հանդես յեկան ընկ. Ռիկովն ու Բուխարինը։ Նրանք իրանց յելույթներում աշխատում եին ապացուցել, թե խոստովանում են իրանց սխալները, թե իրանք կողմակից են կուսակցության հիմնական գծին, վորի դեմ մղած պայքարում աջ ուկլոնիստները պարտվեցին։ Սակայն նրանք շատ համեստ գտնվեցին իրանց սխալների գնահատականում՝ համեմատած այն բանի հետ, վոր իր ժամանակին նրանք դուրս եին գալիս Կենտրոնական Կոմիտեի դեմ։ «Այո, մենք ընդունում ենք մեր սխալները, մենք լավ չենք հաշվեառել. չենք հասկացել այն հնարավորությունները, վոր կան մեզ մոտ. մենք գերագնահատել ենք դժվարությունները, սխալ դիրքի վրա ենք կանգնել կուսակցության հիմնական գծի վերաբերմամբ» և այլն, և այլն։ Ցեվ թեև նրանք 16-րդ համագումարի ժամանակաշրջանի համեմատությամբ մի քայլ առաջ են անցել, այնուամենայնիվ նրանց յելույթներում կատարյալ պարզություն չի յեղել» (Կագանովիչ)։

«Ընկ. Բուխարինը մատնացույց է անում, թե Կենտրոնական Կոմիտեն նրա հայտարարությունը հիմնականում բավարար է գտել։ Կենտրոնական Կոմիտեն դրանով ասել է, թե Բուխա-

բինը մոտենում է կուսակցության գծին. բայց բոլորովին պարզ է, որ «հիմնականում բավարար է»-ն դեռ չի նշանակում, թե ամբողջապես բավարար է"...

Ցենթադրենք, որ ընկ. Ռիկովի ու Բուխարինի յելույթը ցույց է տալիս, թե նրանք վերջնականապես շրջվել են դեպի կուսակցական ուղին։ Սակայն ամբողջ բանը նրանց հետագա աշխատանքից է կախված։ Նրանց մեջ է գործով ապացուցել, որպեսզի կուսակցությունը համոզվի, թե նրանք կարող են աշխատել որպես բոլշևիկ-մարտիկներ՝ կուսակցական հիմնական գիծը տանելու համար։

Կուսակցությունն այժմ մի բան կարող է հաստատել, որ ուկլոնիստները ջախջախված են ոչ միայն կազմակերպչականորեն, այլ և իդեապես։ Բայց դա նշանակում է, արդյոք, որ կուսակցության շարքերում աջ տրամադրությունները տեղ չունեն և չպիտի ունենան։ Իհարկե, կուսակցության շարքերում աջ և հաշտվողական տարրեր կան և նրանց դեմ ամենախիստ պայքար պետք է մղել։ Մենք պետք է պարզ հաշիվ տանք մեզ, որ աջերի գաղափարախոսությունն ու կուսակցության դեմ նրանց մղած գրոհները —այդ բոլորն, ըստ էության՝ դավաճանություն է սոցիալիզմի գործին" (Կագանովիչ)։

„Աջ ոպորտունիզմը կուսակցության ներսում մնում է որպես գլխավոր վտանգ։

Սակայն յերկու ֆրոնտի վրա պայքար մղելու լոզունգը պահում է իր ույժն ու նշանակությունը, մոբիլիզացիայի յենթարկելով կուսակցությունը պայքարելու թե աջերի մանր-բուրժուական լիբերալիզմի դեմ, և թե "ձախերի" մանր-բուրժուական ռադիկալիզմի դեմ։ Պայքար մղելով թեքումների դեմ՝ մենք պետք է հաղթահարենք նեխված հաշտվողականությունն ու անխնա կերպով արմատախիլ անենք յերկերեսանիությունի խարդախությունները" (Կիրով)։

Ցարական Ռուսաստանի նախկին գաղութ բազմազգի Անդրկովկասի պայմաններում՝ մենք առաջվա պես, բայց ել ավելի յեռանդով պետք է Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների միջև փաստական հավասարություն սահմանելու լենինյան քաղաքականությունը վարենք, արագացնելով Անդրկովկասի սոցիալիստական վերակառուցումը, հաղթահարելով մեծապետական շովինիզմի, որպես գլխավոր վտանգի,—և ինտերվենցիայի ոգին ծառայող տեղական նացիոնալիզմի բոլոր յերևույթները։

„Մեր Միության ժողովրդական տնտեսությունը կանգնած է սոցիալիզմի կառուցման աշխատանքների վիթխարի պլանը—հնգամյա պլանը ավարտելու շեմքին։ Վճռական հաղթության հեռանկարները չեն կարող խանգավառության և աշխատանքային նոր վերելքի ալիք չառաջացնել բանվորների և գյուղացիների շարքերում։ Սակայն դա չի կարող նաև չուժեղացնել մեր դասակարգային թշնամիների ատելությունն ու կատաղությունը։ Հենց այդ պատճառով ել այնպես հուսահատական դիմադրություն են ցույց տալիս Խորհրդային Միության ներսում կապիտալիզմի մնացորդները (կուլակների դիմադրություն,

ՁՆասատվություն և այլն)։ Հենց այդ պատճառով ել միջազգային կապիտալիզմն այնպես տենդագին զինված ինտերվենցիայի և պատրաստվում Խորհրդային Միության դեմ։ Դասակարգային սաստկացած կռվի այդպիսի պայմաններում պահանջվում է ծայրաստիճան համախմբել բանվոր դասակարգի, կոլխոզնիկների ու բոլոր աշխատավորների ստեղծագործական ուժերը՝ վերացնելու այն դժվարությունները, որ սոցիալիստական շինարարության ճանապարհին, „հընդամյակը չորս տարում“ իրականացնելու լոզունգի ճանապարհին են գտնվում։ Հենց այդ պայմաններում մեզնից ուժերի ծայրաստիճան լարում է պահանջվում՝ ավելի ծավալելու յերկրի պաշտպանվելու ընդունակությունն ուժեղացնելու համար“ (Ղենումի բանաձևից)։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՄԱ — ՍՈՒ Ա

2013
<< Ազգային գրադարան >>
NL0035750

20 կոպ.